
ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՁՆԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Անձնանունները լեզվի բառապաշարի յուրօրինակ շերտն են կազմում, դրանք առավել քան հասարակ բառերը, փոփոխական են՝ պայմանավորված լեզվակիր հանրության կյանքում կատարվող իրադարձություններով, այսինքն՝ անուններն ունեն ն՝ լեզվական, ն՝ սոցիալական գործառույթներ: Լեզվի պատմության տարբեր շրջանների անձնանվանական բառաշերտերի ուսումնասիրությունն ի հայտ է բերում լեզվակիր հանրության կյանքում կատարված տեղաշարժերը, անվանադիրների կրթական մակարդակի փոփոխությունները, քաղաքական, մշակութային, կրոնական կողմնորոշումները: Այս տեսանկյունից անձնանունները կարելի է համարել նաև սոցիալական յուրահատուկ ցուցիչներ: Գերմանացի հատկանվանագետները, օրինակ, փաստում են, որ կրթված միջին խավը, որպես կանոն, նախընտրում է դասական անուններ, որոնք կրոնի, պատմության, գրականության մեջ կամ սեփական տոհմաճառում նշանակալի դերակատարում ունեն¹: Հայ անվանադիրներն այս առումով բացառություն չեն, ուստի անվանադիր ծնողների կարդացած գրքերը, մշակութային, դավանական արժեքներն այս կամ այն կերպ արտացոլվում են իրենց երեխաների անուններում:

Հատուկ անունների բառաշերտն իր բառակազմական միջոցներով, արմատներով, բնիկ և փոխառյալ կառույցներով լավագույնս բնորոշում է տվյալ լեզվի կենսունակության աստիճանը, ինքնաբավությունը և այդ լեզվի կրողների քաղաքակրթական մակարդակը: Ինչպես ընդհանուր բառապաշարում, այնպես էլ հատուկ անունների անվանացանկերում անհրաժեշտ է ներքին դասակարգումներ կատարել՝ նախ և առաջ ըստ կիրառության առանձնացնելով հատկանվանական հիմնական բառաֆոնդը, որը կարող ենք կոչել գործուն: Հատուկ և հասարակ անունների սահմանագիծը պայմանական է. անուններն անընդհատ փոխանցումների մեջ են: Հետևելով Էդ. Ադայանի ընդհանուր բառագիտական սկզբունքներին՝ անձնանվանական բառապաշարում մենք առանձնացնում ենք հետևյալ երկու մեծ շերտերը՝ ա) գործուն (ակտիվ) և բ) ոչ գործուն (պասիվ) անձնանուններ²: Այս երկու շերտերի մեջ մտնող անձնանունները համաժամանակյա կտրվածքով ստեղծում են հարա-

¹ Տե՛ս <http://www.augsburger-allgemeine.de/wissenschaft/Wie-Vornamen-das-Leben-beeinflussen-id19135281.html>

² Հմմտ. Էդ. Ադայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 135-138:

բերականորեն ավարտուն, փակ բազմություններ, որոնք ունեն լեզվական և սոցիալական հասակ գործառույթներ: Դասակարգման համար իբրև էլակետ և չափանիշ ընդունում ենք մեր լեզվի զարգացման արդի փուլի նորմը: Ոչ գործուն շերտի անուններն իրենց հերթին բաժանում ենք հետևյալ մասնաշերտերի կամ ենթաշերտերի. 1) հնացած անուններ, որոնք գործածական են եղել մեր գրական լեզվի անցած շրջաններում, իսկ արդի ժամանակահատվածում կա՛մ չեն հանդիպում իսպառ, կա՛մ ունեն կիրառության եզակի վկայություններ: Օրինակ՝ *Աթանես, Բարդղղիմեոս, Դուխտիկ, Եղիսարեթ, Թադևոս, Իզնատի, Լուսաբեր, Հայաստան, Ղուկաս, Մադաքիա, Մարկոս, Մաքրուհի, Յուդաբեր, Պոդոս, Սերոբ, Միմոն, Միրեկան, Վրույր, Վարազդատ* և այլն, 2) նորակազմ անուններ, որոնք նորաստեղծ կառույցներ են, ունեն եզակի վկայվածություն և դեռևս լայն կիրառություն չեն ստացել, գործիմակ՝ *Աշխարհիկ, Արփեն, Ասպետ, Արցախուհի, Բարդի, Գանձակ, Լուսոնա, Կայսրուհի, Հայուհի, Նազինե, Նոանե, Վահանե, Վանինե, Վարդանե, Վարդինե, Վրեժուհի, Ուռենի, Փառքուհի* և այլն: Այս կարգի անունները կարող են ժամանակի ընթացքում կա՛մ տեղափոխվել գործուն շերտ, կա՛մ մոռացության մատնվել վերածվելով զուտ դիպվածային միավորների:

Հատուկ անունների գործուն հիմնական բառաշերտը, ի տարբերություն հասարակ անունների, բավական արագ է փոփոխվում: Եթե Մ. Սվոդեշի առաջարկած լեզվաժամանակագրական (գլոտոխրոնոլոգիայի) կամ բառավիճակագրական մեթոդի համաձայն՝ լեզուների հիմնական բառաֆոնդի 100 բառը 1000 տարվա ընթացքում փոխվում է 85-15 հարաբերակցությամբ, այսինքն՝ 85%-ը պահպանվում է, 15%-ը փոխվում³, ապա հատուկ անունների բառաֆոնդում հարաբերակցության պատկերը լրիվ հակառակն է 1000 տարվա ընթացքում անձնանունների հիմնական բառաֆոնդի մեծ մասը գործածությունից դուրս է գալիս, պահպանվում են փոքրաթիվ անուններ՝ հատկապես ժողովրդանուններից, դիցանուններից, ժողովրդին սիրելի պատմաբանահյուսական հերոսների անուններից կազմված ձևերը:

Արտալեզվական տարբեր գործոնները մշտապես ազդում են անվանադրման սկզբունքների, այսինքն՝ անձնանունների ընտրության և կիրառության ընթացքի վրա, թեև պետք է նշել, որ յուրաքանչյուր լեզվակիր հանրույթ՝ հատկապես կազմակերպվածության բարձր աստիճան ունեցող, իր պատմության շրջափուլերում արդեն մշակում և ամբողջացնում է անվանադրման իր բանաձևը, որը պահպանողականության բավականին բարձր աստիճան ունի: Այդուհանդերձ, հատուկ

³ Տե՛ս **Сводеш М.** Лексикостатистическое датирование доисторических этнических контактов и К вопросу о повышении точности в лексикостатистическом датировании // Новое в лингвистике, выпуск I. М., 1960, էջ 23-53 և 53-87, նաև՝ **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 15-16:

անուններն ունեն յուրօրինակ «սոցիալական պահանջարկ» և անհրաժեշտություն, այլ կերպ ասած՝ մոդա. տարբեր ժամանակներում մոդայիկ կամ սոցիալապես պահանջարկված են դառնում տարբեր անուններ: Օտարերկրյա յծի կամ գերակայության ժամանակներում պահանջարկված են օտար անունները, այսպես՝ Ռուսական կայսրության, ապա խորհրդային ամբողջատիրության ժամանակաշրջանում հայերենը փոխառել և գործուն կիրառության մեջ էր դրել ռուսական-սլավոնական միջավայրում տարածված հարյուրավոր անուններ՝ և՛ ուղիղ ձևերով, և՛ անցյալով, ինչպես նաև փոքրացուցիչ-մանկական տարբերակներով՝ *Գայլա, Ջինա, Բյոա, Բյոիչ, Բվան, Լիդա, Լյուբա, Միխայիլ, Միշա, Յակով, Յաշա, Նիկիտա, Սաշա, Մաշիկ, Սյավա, Սյավիկ, Վանյա, Վամվառա, Վասիլիսա, Վլադիմիր, Վլադիկ, Վոլոդյա, Վյաչեսլավ, Օլեգ, Օլգա ...* Նման անունների շարքը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո համարվեց բոլշևիկյան-խորհրդային նորակազմություններով՝ *Պոնարա, Կառլեն, Կիմ, Մառլեն, Մելս, Նինել, Շչորս, Վիլեն, Վիտլ, Վիտր, Վլադիլեն, Վուլեն, Օկտիկ, Օկտյաբրինա* և այլն: Ավելի վաղ հայոց մեջ (և՛ ազնվականների, և՛ հասարակ մարդկանց՝ առևտրականներ, հողագործներ, արհեստավորներ) տարածված էին նոր պարսկական, արաբական և թուրքական անուններ՝ *Աբաս, Աբամելիք, Աբուքարիմ, Ազիզ, Աղամիր, Ամիր, Ամիրան, Գյուլիզար, Դադաշ, Դիլան, Խանում, Խաթուն, Հասան, Ջալալ, Ջանիբեկ, Ջավահիր, Սայադ, Փարամազ, Ճահրադ*: Հայոց հին շիրմաքարերի կամ դրանց վերաբերող գրականության անգամ թուրքիկ բնթերցումը հաստատում է մեր այս պնդումը, միակ բացառությունը եղել են հայ հոգևորականները, որոնց անունները հիմնականում քրիստոնեական դավանաբանության հետ են կապված և գերծ են մահմեդական և բոլշևիկյան անունների ազդեցությունից: Վերոնշյալ անունները քաղաքական-պետական փոփոխությունների հետևանքով գործուն շերտից վաղուց արդեն տեղափոխվել են հնաբանությունների շարքը:

Կրթական զարգացմանը զուգընթաց՝ հայոց անվանացանկը համարվել է պատմամշակութային անուններով՝ գրողների, հայտնի մարդկանց, գրական հերոսների անունները ցայսօր էլ հայկական անվանադրման մաս են կազմում՝ *Դեզդեմոնա, Լաերտ, Լաուրա, Լյուդվիգ, Կարմեն, Համլետ, Պուշկին, Ջոկոնդա, Սոկրատ, Վալտեր, Օֆելյա, Ֆիրդուս*:

Հր. Աճառյանը, դասակարգելով մեր իրականության մեջ վկայված և գործածական անունները, առանձնացնում է 15 խումբ⁴. 1) նախահայկական անուններ. այս ձևակերպման ներքո նա հասկանում է արդի ըմբռնմամբ վաղնջահայերեն, ինչպես նաև ենթաշերտային անունները, որոնց մի մասն այսօր արդեն ստուգաբանվում է հնդեվրոպական ար-

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե, Եր., 1962, էջ 346-355:

մատներով կամ վերականգնվում է որպես ցեղանուն՝ *Արամ, Արարատ, Վան, Կարին, Մասիս*:

2) Անծանոթ անուններ. սրանք հարաբերակից են առաջին խմբի անունների հետ, նշված անունների զգալի մասը ներկայումս ստուգաբանված է, դրանք հայոց ժողովրդանուններն են կամ հնագույն նախաբարական տոհմերի ու ազնվականների անունները՝ *Հայկ, Արմենակ, Արա, Արամայիս, Ամասիա, Հարմա, Մուշեղ*: Հր. Աճառյանը դրանց մեջ թեական երանգով խեթական-հաթական և փոյուզական արմատներ է տեսնում: Հետագա շրջանի ուսումնասիրողները մեծ մասամբ հաստատում են ստուգաբանական այս ենթադրությունները⁵:

3) Բուն հայկական անուններ. այս անունները կոչվում են բուն հայկական, որովհետև մեկնվում են հայերենով, այսինքն՝ ստուգաբանորեն թափանցիկ են, դրանց մեջ շատ են բնության երևույթների, մարդկային հարաբերությունների, կենդանիների, թռչունների, մարմնի մասերի անունների ածանցված կազմությունները՝ *Այծեմնիկ, Այրուկ, Առյուծ, Աստղիկ, Արտույտ, Գառնիկ, Եզնիկ, Եղբայր, Զարմայր, Թայթույ, Թաթիկ, Թոռնիկ, Կորյուն, Սրջունիկ, Տիրայր, Յիկ* և այլն: Այս անունները հեթանոսական ժամանակներից են գալիս, և, ինչպես Հր. Աճառյանն է նշում, քրիստոնեության ազդեցությամբ դրանք սկսում են նահանջել՝ դուրս մղվելով անվանացանկերից:

4) Պահլավական անուններ, որոնք ծագումնաբանորեն թեև պարթևական են, բայց դարձել են «հայության ամենասիրելի անունները», որովհետև խորհրդանշում են մեր պատմության ամենանշանավոր ժամանակները, ազգային հերոսներին, ընդ որում՝ իսլամ ընդունելուց հետո պարսիկները հրաժարվեցին այս անուններից, և դրանք դարձան հայկական ստացվածք՝ *Աշխեն, Անուշ, Արշակ, Արտաշես, Բագրատ, Գուրգեն, Զարեհ, Խոսրով, Վահան, Վահե, Վարդան, Վաչե, Տրդատ* և այլն:

5) Ասորական անուններ այս անձնանունները հայոց մեջ հայտնվեցին քրիստոնեության ընդունումից հետո՝ *Արշամ, Արգար, Գաղիշո, Եղիշե*: Դրանք հիմնականում համագործածական չդարձան, բայց մեր հատկանվանացանկերում ամրագրվեցին:

6) Եբրայական անուններ. այս անունները մեր ժողովուրդների ամփոփական հարաբերությունների արդյունք չեն, այլ հայերենում ամրակայվել են հույների միջնորդությամբ և հունարենի հնչյունական համակարգին բնորոշ ձևերով, բայց քանի որ դրանց սկզբնաղբյուրը Աստվածաշունչն է և քրիստոնեական հավատքը, ապա այդ անունները քրիստոնեության ընդունումից հետո հայոց հատկանվանական բառաշերտի գործուն շերտն են կազմում՝ *Աբել, Աբրահամ, Ադամ, Դանիել, Դավիթ, Եվա, Հակոբ, Միքայել, Մահակ, Մեթ* և այլն:

⁵ Ավելի մանրամասն տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 279-293:

7) Հունական անուններ. հույները քրիստոնեության և քաղաքակրթության հիմնական տարածողներն են եղել մեր աշխարհում: Եթե նախաքրիստոնեական հայկական մշակույթը հիմնականում պարթևական էր, ապա քրիստոնեականը՝ հունական, ուստի նրանց անունները հաստատվել են մեր հատկանվանական բառապաշարում՝ *Ագապի, Անաստաս, Գևորգ, Գրիգոր, Թեոդորոս, Կիրակոս, Հեղինե, Հռիփսիմե, Ղևոնդ, Մտեփան, Վասիլ...* Այսօր կարող ենք արձանագրել, որ դրանք ևս, ինչպես եբրայական աստվածաշնչյան անունները, գործածական են:

8) Արաբական անուններ. այս անունների առկայությունը մեր հատկանվանացանկերում Հր. Աճառյանն իրավացիորեն տարօրինակ երևույթ է համարում: Նրա համոզմամբ, անձնանունները կրոնական բնույթ ունեն և կրոնակից ազգերից փոխառվելով՝ նրանց կրոնի հետ էլ տարածվում են, բայց «հայերն անգամ քրիստոնեության ամենից պայծառ տարիներում, ընդունել են կրոնապես իրենց թշնամի ազգերի անձնանունները, ինչպես արաբների և թյուրքերի՝ *Արխարիպ, Համամ, Սլեհ, Խությունելիք*: Անշուշտ մահմեդականները չստիպեցին մեզ, որ բռնի կերպով ընդունենք իրենց անունները»⁶: Ըստ ամենայնի, այս երևույթը սոցիալ-հոգեբանական բնույթ ունի, հեշտությամբ բացատրվում է փոքր, նվաճված ազգի բարդությունով, որը ձգտում է հարմարվել օտար միջավայրին իր սոցիալական ցուցիչներով՝ անուններով, վարքուբարքով, նախընտրած երաժշտությամբ, հագուկապով: Բարեբախտաբար, նման անունները 17-րդ դարից հետո ազգային ինքնագիտակցության վերելքի շրջանում արդեն գործուն բառաշերտից անդարձ դուրս մղվեցին՝ մասամբ փոխարինվելով ռուսական կամ եվրոպական անուններով:

9) Լատինական անուններ. այս անձնանունները փոխառվեցին հիմնականում Կիլիկյան թագավորության գոյության ընթացքում և դրա անկումից հետո դուրս մղվեցին սակավ բացառություններով՝ *Անտոն, Լևոն, Ջաբել, Ալիս, Հեթում, Օգոստինոս*:

10) Հայ կրոնական անուններ. հայոց լեզուն ինքնապաշտպանական հզոր ներքին բնագոյ ունի, որի շնորհիվ քրիստոնեության տարածման շրջանում եբրայական, ասորական և հունական անունների համատարած գործածությունը մենք աստիճանաբար սկսեցինք հակադրվել, ստեղծվեց թարգմանական անունների մի մեծ շերտ: *Անաստաս*-ը դարձավ *Հարություն, Թեոդորոս*-ը՝ *Աստվածատուր, Մեթ*-ը՝ *Մխիթար*, և այդպես ձևավորվեցին հայոց մեջ ամրակայված հայտնի անունները՝ *Ավետիս, Ավետ, Գալուստ, Իսկուհի, Խաչատուր, Խաչիկ, Կարապետ, Համբարձում, Մաքրուհի, Մկրտիչ, Սրբուհի, Տիրուհի*: Հր. Աճառյանն այս երևույթը կապում է հունաբան դպրոցի ներկայացուցիչների գոր-

⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 350:

ծունեության հետ՝ այն կոչելով «ազգային նախանձախնդրության ձեռնարկ»: Հավաստենք, որ այս անունները հիմնականում համագործակցության են առ այսօր:

11) Հայ ժողովրդական անուններ. այս բառաձևերը կյանքի ժողովրդական ընկալման արդյունք են, հաճախ բանաստեղծական և սրամիտ պատկերների լեզվական խտացում՝ *Թուխձամ, Շաղոսկի, Վարդիթեր, Վարդերես, Ոսկեհատ, Հերիքնագ, Բավական, Ջանագան, Նորվարդ, Նորարև*: Ժամանակակից կյանքի և մարդկային մտածողության փոփոխությունների թելադրանքով նման անունները կա՛մ դուրս են մղվում, կա՛մ փոխարինվում իրենց արմատական բաղադրիչներով:

12) Մեյջուկ-թաթարական անուններ. մենք այս ծագման անունները կմիավորեինք 8-րդ խմբի անունների հետ, որպես նույն երևույթի արգասիք՝ *Ասլան, Գյուլիզար, Գյուլմելիք, Հախնագար, Ջավանշիր...* Նման անունները լիովին դուրս են մղվել արդի անվանացանկերից՝ մասամբ պահպանվելով ազգանուններում:

13) Եվրոպական անուններ. Հր. Աճառյանի դիտարկմամբ, սրանք սկզբնապես արևմտահայերի սիրելի անուններն են եղել, որոնք ավելի ուշ են փոխանցվել արևելահայերենին, բայց մենք կարծում ենք, որ եվրոպական անունների խորացող այս ներթափանցումը հայոց անվանացանկի սկզբանե պայմանավորված է եղել հայության աշխարհընկալմամբ, համաշխարհային զարգացումներին մասնակից դառնալու միամիտ ձգտումներով՝ անկախ բնակության վայրից: Բերենք օրինակներ՝ *Անգելինա-Լինա, Էյեռնորա-Նորա-Էյա, Էդուարդ-Էդվարդ, Էվելինա-Էվա, Էմմա, Հենրի* և այլն:

14) Ռուսական անուններ. բացի զուտ ռուսական անունների փոխառումից, մեզանում ժամանակին նկատվել է հունարաններին հակառակ միտում՝ հայկական անձնանունները «թարգմանել», իրականում՝ ռուսացնել, մի իրողություն, որն առկա է նաև այժմ՝ հատկապես ռուսաստանաբնակ հայերի շրջանում: Այսպես՝ *Հովհաննես*-ը դառնում էր *Իվան, Մկրտիչ*-ը՝ *Նիկիտա, Հարություն*-ը՝ *Արտյոմ, Արշակ*-ը՝ *Արկադի, Մարտիրոս*-ը՝ *Մարտին, Նիկողայոս*-ը՝ *Կոլյա* և այլն: Հարգի և սովորական է դառնում նաև անունների ռուսական փաղաքջաձևերը դարձնել ինքնուրույն կիրառություն ունեցող անձնանուններ՝ *Դունյա, Կատյա, Կոլյա, Մաշա, Միշա, Յաշա* և այլն: Այսօր Հայաստանի Հանրապետության տարածքում այս մտայնությունը հիմնականում վերացել է, բայց հետքերն առկա են, որովհետև մեզանում երեխաներին պապի կամ տատի անունով անվանակոչելու սկզբունքը դեռևս պահպանվում է, թեև արդեն ձևավորվել է նոր ձգտում՝ երեխաներին անվանակոչել համաշխարհային կամ հայկական պատմության և մշակույթի գործիչների անուններով:

15) Հայ ազգային անուններ. այս ձևակերպման ներքո հայագետը

համախմբում է հայկական ազգային ինքնագիտակցության զարթոնքից հետո տարածում գտած անձնանունները, որոնք պետք է համարել իրախուսելի բոլոր ժամանակների համար, որովհետև դրանք ողջամիտ այրնտրանքն են զուտ կրոնական կամ օտարաբան անունների: Հր. Աճառյանն իր ժամանակի համար՝ 1920-30-ական թվականներ, բերում է հետևյալ ձևերը՝ *Ազնիվ, Աղավնի, Արարատ, Արմենուհի, Արաքս, Արծվիկ, Արփենիկ, Գեղուհի, Լուսնթագ, Հայաստան, Հայկազն, Հայկարամ, Հասմիկ, Հրազդան, Հրանուշ, Հրայր, Հրայուհի, Մասիս, Միրանուշ, Վարդանուշ, Փայլակ, Քնարիկ...* Նշյալ ձևերի մի մասն այսօր՝ 21-րդ դարում, գործածությունից դուրս է մղվել, բայց համարվել է ավելի արդիական ձևերով՝ *Արամէ, Արգիշտի, Արեգ, Արփի, Արն, Գոռ, Մենուա, Նարէ, Նահրի, Նարեկ, Վան, Վարդ:*

Հայկական իրականության մեջ, որը հետինդուստրիալ հասարակության ժամանակներում անգամ փորձում է պահպանել իր ավանդական կենսաձևը, տաբուների համակարգը, անվանադրման բանաձևը կտրուկ փոփոխությունների դեռ չի ենթարկվել, սակայն անկախության վերջին 25 տարիների ընթացքում հատկապես ուրվագծվել են այն ուղղությունները, որոնք էապես պայմանավորում են հայկական անվանադրման նոր միտումները: Ընդամին՝ պետք է կանխավ փաստել, որ արևելահայերենում և արևմտահայերենում անվանադրման սկզբունքները բավական տարբեր են. թեև վերջին տասնամյակների ընթացքում սփյուռքահայության շփումները Հայաստանի Հանրապետության հետ ավելի սերտ են դարձել, այդ իսկ պատճառով արևմտահայերենում գերիշխող որոշ անուններ ներթափանցել են նաև գրական արևելահայերեն, բայց տարբերությունները հիմնականում պահպանվում են հատկապես ավանդական Սփյուռքի վերաբերմամբ: Իսկ վերջին տարիներին արտագաղթած հայությունը դրսում արագ կորցնում է անվանադրման հայկական բանաձևը՝ ընդօրինակելով այն երկրների ու ժողովուրդների անունները, որտեղ իրենք ապաստան են գտել: Պետք է, իհարկե, նշել, որ հայերն առավել հակված են ընդօրինակելու քրիստոնյա ժողովուրդների անունները, խնդիրն այստեղ առնչվում է մշակութաբանական ընդհանրությունների և ձգտումների հետ. եվրոպական կողմնորոշումը հայ իրականության մեջ առավել գերակա է դեռևս Բագրատունյաց, ապա Կիլիկյան Հայաստանի ժամանակներից: Հիշենք այդ արքայատոհմերի գործիչների անունները՝ *Կատրանիդէ, Մոֆյա, Ջաբել, Շառլոթ, Կոնստանդին, Օշին* և այլն:

Մեր այս հոդվածի նպատակն է վեր հանել արդի արևելահայերենում անձնանունների լեզվական և սոցիալական գործառույթների փոփոխությունները: Նոր միտումների արձանագրման համար իբրև աղբյուր օգտագործել ենք www.armstat.am կայքում եռամսյակը մեկ «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» խորագրի ներքո «Նորածիններին ավելի հաճախ տրվող անուններն ըստ սեռի» աղյուսակների տվյալներ-

րը, ինչպես նաև ուսանողական մատյանների անվանացանկերը: Առկա նյութի վերլուծությունը մեզ հանգեցրել է հետևյալ եզրակացությունների.

Ա) Հայկական անձնանուններից վերջին տարիներին առավել գործունակ են դարձել պարզ-արմատական կառույցները, ընդ որում նախապես ավելի տարածված են եղել սվյալ արմատից ածանցմամբ կամ բառաբարդմամբ անուններ կերտելու եղանակները: Այսպես՝ *Հայարփի, Միրարփի, Արևիկ, Արևհատ* անունները գործածության հաճախականությամբ արդեն ակնհայտորեն զիջում են իրենց տեղը *Արփի, Արև* ուղիղ ձևերին: Կամ՝ *Վանուհի, Վարդուհի, Աստղիկ, Տաթևիկ, Արփինե, Մարինե, Լուսինե* ավանդական անուններն աստիճանաբար կորցնում են իրենց տարածվածությունը, փոխարենն առավել հաճախադեպ ու նախընտրելի են դրանց հիմք հանդիսացող արմատական անձնանունները՝ *Աստղ, Արփի, Լուսին, Վան, Վարդ, Տաթև*: Կրճատման այս միտումը ժամանակի՝ նոր հազարամյակի հրամայականն է: Մարդիկ ձգտում են գերապատվություն տալ կարճառոտ, առավելագույնը երկվանկ կառույցներին. *Մարկոս* անվան փոխարեն գերապատվությունը տրվում է *Մարկ* ձևին, *Ավետիք/իս*-ի փոխարեն՝ *Ավետ*, և այս տրամաբանությամբ սրբագրվում են բազմաթիվ անուններ:

Բ) Նման կրճատումների ընթացքում երբեմն վերանում է անձնանունների սեռային տարբերակման ջրբաժանը, և ավելանում են երկսեռ ընդհանրական անունները: Չորօրինակ՝ *Արեգնազան* անվան փոխարեն իբրև իգական անուն սկսել է գործածվել *Արեգ* ձևը, որն անցյալում ակնհայտորեն արական բովանդակություն ուներ. գրեթե բոլոր ժողովուրդների առասպելական աշխարհընկալման մեջ իր կիզակետին հասնող արևն այրական աստվածություն էր, իսկ *Արփին*՝ վաղորդյան արևը՝ կանացի: Երբեմն այս հակասությունն ուղղելու համար *Արեգ* անվանն ավելացվում է *-ա* մասնիկը, որը սլավոնական կամ լատինական ավանդույթից է փոխառված՝ *Արեգա*: Բայց ակնհայտ է, որ ընդհանրական անունների քանակը սկսել է ավելանալ, այսպես՝ *Տաթև, Անի, Շուշի, Վան* տեղանունները, որոնք հայկական անվանադրման սկզբունքի համաձայն և՛ տեղանուններ են, և՛ իգական անձնանուններ, սկսել են տրվել նաև տղաներին: Հանդիպել ենք անգամ *Արմեն* անունով տարբեր տարիքի կանանց: Նման փոխանցումների նախադեպերն անցյալում ևս վկայված են. օրինակ, *Նաիրի* ժողովրդանունը հանդիպում է թե՛ որպես արական, թե՛ որպես իգական անձնանուն, թեև կա *Նաիրի* անվան զուտ իգական տարբերակը՝ *Նաիրուհի* կամ *Նաիրա*, նույն սկզբունքով ունենք *Վանուհի* զուտ իգական կառույցը: Նկատելի է, որ անաժանց արմատական անձնանուններն առավել մեծ ներուժ ունեն ընդհանրական դառնալու, քան ածանցավորները, որովհետև ածանցների զգալի մասի մեջ ամրակայված է որոշակի սեռային բովանդակություն. այսպես՝ իգական անձնանուններ են կազմվում ոչ միայն

-*ուհի* ածանցով, այլև *-իկ, -ինե, -անե* ածանցներով: Օրինակ՝ *Տաթևիկն* ակնհայտ իգական անձնանուն է, իսկ *Տաթև*-ն արդեն ընկալվում է որպես ընդհանրական: Հետաքրքիր է, որ անցյալում զուտ այրական բովանդակության անունները ժամանակի ընթացքում կարող են վերածվել մաքուր իգական անունների. այդպիսի իմաստափոխության օրինակ է *Միրուն*⁷ անձնանունը, որն անցյալում միայն արական անուն էր, իսկ հետագայում վերածվել է զուտ կանացի անվան իր հոմանիշ ձևի հետ՝ *Գեղեցիկ*:

Գ) Նշեցինք արմատական անձնանուններին գերապատվություն տալու միտումը, բայց միաժամանակ պետք է արձանագրենք, որ մի շարք անձնանվանակերտ ածանցներ կիրառության նոր ոլորտներ են ձեռք բերում: Խոսքը հատկապես վերաբերում է *-անե/-ինե* և *-ուհի* ածանցներին, որոնք սկսել են իգական անձնանուններ կերտել բավական անսովոր արմատներից, դրանց որոշ մասը գալիս է անցյալից, բայց մեծ մասը նորակազմություններ են, որոնք աստիճանաբար կիրառական են դառնում՝ *Գիսանե, Նոանե, Շուշանե, Վահանե, Արցախինե, Սերինե, Վարդինե, Գայսրուհի, Վրեժուհի, Արցախուհի* և այլն: Իսկ արական անձնանունները, ի տարբերություն իգականի, հիմնականում արմատական են, ածանցագուրկ:

Դ) Տեղանուններն անձնանուն դարձնելու սկզբունքը, որը վկայված է դեռևս Խորենացու Հայոց պատմության մեջ և ընկած է նրա ստուգաբանությունների զգալի մասի հիմքում, այսօր էլ շարունակում է գործել: Արցախյան ազատամարտի շնորհիվ նոր տեղանվանահիմքեր են սկսել անձնանուն դառնալ: Այսպես, *Արցախ-Արցախուհի-Արցախինե, Շուշի, Վարանդ, Գանձակ*: Այս անունները ազգային, հայրենասիրական մեծ լիցք են պարունակում և, միաժամանակ, քաղաքական ընդգծված բովանդակություն ունեն:

Ե) Անձնանուններն ի սկզբանե այնպիսի նշաններ են, որոնք պետք է մարդու ազգային պատկանելության վերաբերյալ հստակ բովանդակություն պարունակեն: Մշակութային առումով յուրաքանչյուր ազգի ինքնապահպանման կամ ինքնաբավության լավագույն ցուցիչներից մեկը նրա բառապաշարում առկա հիմնական հատուկ անուններն են: Մեր իրականության մեջ այս տեսանկյունից դեռ վաղնջական ժամանակներից նկատելի է եղել օտար անունների հանդեպ ձգտում-նախապիրությունը: Օտար անունները հայ անվանադիրներին հաճախ առավել գրավիչ են թվացել: Հիշենք դեռ հնագույն հայերենում բնիկ հայկական անձնանունների դուրս մղման գործընթացը իրանական անձնա-

⁷ Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ հիշատակված է *Միրուն* անունով քրիստոնյա սուրբ այրը, որը նահատակվել է հանուն հավատի (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Եր., 1988, էջ 421): Հր. Աճառյանը ևս այս անունը նշում է որպես արական բազմաթիվ վկայություններով (տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, էջ 533-535):

նունների ազդեցությամբ: Նույն երևույթն արձանագրում ենք նաև հնագույն դիցանունների և ընդհանրապես դիցարանի ուսումնասիրության դեպքում: Հին հայկական աստվածություններին դուրս մղեցին օտար, եկվոր աստվածները, և մեր ազգածագման մեջ ազդու դերակատարում ունեցող *Ար/Արա* աստծուն եկան փոխարինելու *Միհրը* և *Վահագնը*: Նիկողայոս Ադոնցն այս փաստը բացատրում է միևնույն արքայատոհմի տիրապետության փաստով. թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում պարթևներն էին իշխում, ուստի «երկու երկրներում իշխում էր նույն պանթեոնը»⁸: Թեև պետք է նշել, որ իրանական դիցարանի աստվածների «հաղթարշավը» դեպի Հայաստան սկսվել է դեռ մ.թ.ա. VI-V դարերում: Խորքային մակարդակում «փոքր ածու» լինելու հանգամանքը հայերին միշտ մղել է դեպի մեծ ազգերը, այդ մղման լեզվական դրսևորումներից ամենաակնառուն թե՛ հասարակ, թե՛ հատուկ անունների մեծաթիվ փոխառություններն են:

Հիշենք «Մասնա ծռեր» դյուցազներգությունը, որտեղ բնիկ հայկական անձնանուններով հիմնական հերոսներ չունենք՝ *Դավիթ*, *Մհեր*, *Խանդուր*: Մեր ժողովրդական հեքիաթներում ևս անվանացանկը հիմնականում փոխառյալ է: Այս միտումը մի պահ թուլացել էր և գրեթե անհետացել էր Արցախյան շարժման տարիներին, երբ ազգային ինքնագիտակցությունը հզոր խթան դարձավ շատերի համար, որոշ անհատներ անգամ սկսեցին փոխել իրենց անունները՝ հայկականացնելով դրանք, *Նապոլեոնը* դարձավ *Նարեկ*, *Ալբերտը*՝ *Աբգար*, *Լավրենտին*՝ *Լևոն*, *Յուրին*՝ *Երվանդ* և այլն: Այս միտումը հանգեցրեց նաև պատմական խոր անցյալից եկող որոշ անունների վերակենդանացման, այսպես՝ ուրարտական արքաների, ասուրական հերոսների անունները տեղափոխվեցին մեր ժամանակներ, և այսօր մենք ունենք՝ *Արգիշտի*, *Մենուա*, *Մարդուր*, *Արամե*, *Բիայնա* անձնանունները կրող անհատներ: Սակայն ազգային պետականություն կառուցելու 25-ամյա դեգերումների ընթացքում մենք վերստին կորցրինք ինքնաբավությունը, և հայկական անունները սկսեցին նահանջել, արտագաղթի ձգտումների աճին զուգընթաց մեր անձնանուններում աճում են օտար, հատկապես եվրոպական կամ ամերիկյան ավանդույթներով ստեղծված անունները՝ *Աննա-Մարի*, *Ալեքս*, *Ալեք*, *Ալան*, *Ալեն*, *Ալբեր*, *Արիանա*, *Արինա*, *Արսյոմ*, *Բեն*, *Դայանա*, *Էդգար*, *Էրիկ*, *Էլեն*, *Էմիլի*, *Էվա*, *Լինա*, *Լիկա*, *Լյուսի*, *Հենրի*, *Մաքս*, *Սոֆի*, *Վիվիեն* և այլք: Այսպես՝ 2016 թ. հունվար-հունիս ամիսների ամենահաճախադեպ անունների հիսնյակում իգական անուններից 26-ն ակնհայտ օտար, ոչ հայկական անուններ են, իսկ արական անձնանուններում՝ 14-ը: Ընդ որում՝ նման հարաբերակցություն նկատվում է ՀՀ վիճակագրության ծառայության տպագրած վերջին հինգ տարիների անվանացանկերում:

⁸ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 370:

Հստակ է, որ իգական անունները «համաշխարհային» դառնալու ավելի ընդգծված միտում ունեն, քան՝ արականները: Տարբեր տարիքի անվանադիր ծնողները հաճախ կարծում են, թե տղաներին պետք է հայկական, պապերից եկող անձնանուններ տալ, իսկ աղջիկների պարագայում դա բնավ պարտադիր չէ, ընդհակառակը՝ պետք է արտասահմանյան գրականության երկերի կամ շոու-բիզնեսի նշանավոր հերոսների անուններով կոչել իրենց դուստրերին, որովհետև դրանք գեղեցիկ են: Կատարվում է գեղեցիկի և անհրաժեշտի յուրօրինակ տարանջատում:

Հայկական անվանադրման հին բանաձևն այլակերպվում է. պապի, տատի կամ տոհմի հիմնադիրների անունների անվանակոչման սկզբունքի փոխարեն առաջ է մղվում այսպես կոչված «համաշխարհային» կամ վերագրային անուններով իրենց զավակներին կոչելու ձգտումը, գերապատվություն է տրվում օտար անուններին, լավագույն դեպքում՝ աստվածաշնչյան, վերջիններիս տեսակարար կշիռը անցած 10 տարիների ընթացքում աճել է՝ *Աբրահամ, Դանիել, Միքայել, Դավիթ, Աննա, Սառա, Եվա, Ռեբեկա*: Բնորոշ է, որ աստվածամոր անվան բոլոր տարբերակները բարձր ժողովրդականություն են վայելում՝ *Մարիամ, Մարիա, Մարի, Մերի*:

Մեր լեզվի արդի անվանացանկը, այսպիսով, իր բառակազմությամբ, բովանդակությամբ, փոխառյալ և բնիկ բաղադրիչներով, խմբագրման, վերանայման կարիք ունի, ընդ որում՝ այդ վերանայումը պիտի կատարվի պետական, մասնագիտական աստիճանների կողմից. անվանադրման գործընթացը չպետք է տարերային լինի: Տարերայնության դեպքում բավարարվում են լեզվակիր հանրության ենթագիտակցական պահանջները: Այնինչ անվանադրումը գիտակցական գործողություն է, որը հեռահար նպատակներ է հետապնդում թե՛ անձի, թե՛ ազգի ինքնության բացահայտման առումով: Ինչպես Հր. Աճառյանն է գրում. «Մարդկային հասարակության մեջ չկա թեկուզ ամենավայրենի մի ցեղ, որի անդամները անձնանուն չունենան: Անձնանունը համաշխարհային մի երևույթ է»⁹: Բայց համաշխարհային լինելով՝ հատուկ անունները՝ որպես տարբերակիչ նշան, ունեն հստակ ազգային բովանդակություն, ազգապահպան գործառույթ, որի լիարժեք իրացումը ոչ միայն անհատի կամ առանձին ընտանիքի, այլև ողջ հանրության ու պետության կարևորագույն խնդիրներից է: Այս նպատակի իրագործման համար քարոզչություն է պետք հանրային լրատվամիջոցներով, կրթական գործընթացում անձնանունների ազգապահպան գործառույթի բացատրություն և ամրակայում, համապատասխան նոր աստիճանների և օրենսդրական դաշտի ձևավորում, որոնք մեղմ, բայց նպատակասլաց կուղղորդեն անվանադրման գործընթացը դեպի անհրաժեշտ հանգրվան՝ անվանադրման լեզվական արդի նորմ դարձնելով հայկա-

⁹ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, էջ 340:

կան կամ հայկականացված անձնանունների գերակայությունը հասկանվանական գործուն բառաշերտում՝ ըստ կարելիության գերծ պահելով այն օտարաբան անուններից:

Բանալի բառեր- *հատուկ անուն, անձնանուն, անվանադրուժ, լեզվական նորմ, գործուն անձնանուններ, ոչ գործուն անուններ, իզական, արական և ընդհանուր անձնանուններ, անձնանունների կրճատում, անունների ազգապահպան գործառույթ, հայկականացում*

НАРИНЕ ДИЛБАРЯН – Анализ антропонимической лексики армянского языка. – Собственные имена, как и нарицательные, имеют общие лексические характеристики. В антропонимической лексике согласно действующей языковой норме выделяются два больших слоя: а) активные имена, или основной словарный запас антропонимов, и б) пассивные имена. Второй слой подразделяется на две подгруппы: 1) устаревшие имена и 2) новые имена, именные неологизмы, которые ещё не закрепились в антропонимической лексике. Со временем они либо перейдут в активный слой, либо станут окказиональными единицами.

В современной антропонимической лексике армянского литературного языка можно отметить следующие основные тенденции: а) сложные или составные антропонимы замещаются простыми, составные имена теряют свои суффиксы или другие корневые элементы, например, Արեգնազ (Арегназ) > Արեգ (Арег), Ոսկեհատ (Воскехат) > Ոսկի (Воски), Նաիրուհի (Наирухи) > Նաիրի (Наири), Արևիկ (Аревик) > Արև (Арев), Աստղիկ (Астхик) > Աստղ (Астх); б) увеличивается количество так называемых общих имён, выступающих в качестве как женских, так и мужских: Արեգ (Арег), Տաթև (Татев), Նաիրի (Наири), Վան (Ван), Շուշի (Шуши); в) популярность приобретают иноязычные имена, в основном европейские и библейские, то есть имя перестаёт быть национальным идентификатором: Էլեն (Элен), Միլենա (Милена), Ալան (Алан), Էրիկ (Эрик), Էդուարդ (Эдуард), Ալեքս (Алекс), Մարիա (Мария), Մերի (Мери), Մարի (Мари), Էմանուել (Эммануел), Սառա (Сара), Եվա (Ева) и т.д. Последняя тенденция вызывает определённую тревогу.

Ключевые слова: *антропонимическая лексика, именование, языковая норма, активные имена, пассивные имена, общие имена, сокращение имён, национальная функция имён, арменизация*

NARINE DILBARYAN – Analysis of Anthroponymic Vocabulary in Armenian. – Proper names like common nouns have their general lexical characteristics. The anthroponymic vocabulary of the language consists of two major layers: а) active names or basic anthroponymic vocabulary and б) passive names. The second layer in its turn has 2 subgroups: 1) obsolete names and 2) new names, neologisms, which are not rooted in the active anthroponymic vocabulary. These names can easily be transferred in the course of time into the active layer or become occasIn the modern anthroponymic vocabulary of the Armenian literary language, we would note the following main tendencies are noted in the selection and use of personal names: а) complex or composite anthroponyms are replaced with shorter ones, compound names lose their suffixes or other root particles thus becoming short monosyllabic names, for example, Արեգնազ (Aregnaz) > Արեգ (Areg), Ոսկեհատ (Voskehat)

> Ոսկի (Voski), Նաիրուհի (Nairuhi) > Նաիրի (Nairi), Արևիկ (Arevik) > Արեւ (Arev), Աստղիկ (Astghik) > Աստղ (Astgh), b) the increasing use of so-called universal, common names, which are both female and male anthroponyms: Արեգ (Areg), Տաթև (Tatev), Նաիրի (Nairi), Վան (Van), Շուշի (Shushi), c) the most popular foreign names, mainly European and biblical, national names are used less, names of this type are losing their function of national identification – Էլեն (Elen), Միլենա (Milena), Ալան (Alan), Էրիկ (Erik), Էդուարդ (Eduard), Ալեքս (Alex), Մարիա (Maria), Մերի (Meri), Մարի (Mari), Էմանուել (Emanuel), Սարա (Sara), Եվա (Eva) etc. The latest tendency is quite alarming.

Key words: *anthroponymic vocabulary, personal name, naming, language norm, active names, passive names, women, men and common names, the reduction of the names, the national function of the names, Armenization*